

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 5 ՆՈՅԵՄԲԵՐ 2017 ԹՎԱԿԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ժամը 20:30 դրությամբ

Հ/Հ	Աղբյուրը	Վայր		Ներկայացված փաստը	Փաստի հավաստիությունը	Ում հետ է ճշտվել փաստը	Պարզաբանում կամ ձեռնարկված միջոցառում
		ՏԸՀ	Ընտրական տեղամաս				
1	http://armlur.am/747826/	թիվ 20		ընտրատեղամասերի մեծ մասում տեսախցիկներ չկան			Ընտրական օրենսգրքի 11.1. հոդվածի համաձայն. «Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ կառավարության սահմանած կարգով անցկացված մրցույթի արդյունքում ընտրված մասնագիտացված կազմակերպությանը Կենտրոնական ընտրական հանձնաժողովը թույլատրում է իրականացնել բոլոր ընտրական տեղամասերից քվեարկության ընթացքի և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի տեսանկարահանում և միաժամանակյա համացանցային հեռարձակում ուղիղ ժամանակային ռեժիմում՝ հատուկ ստեղծված կայքի (կայքերի) միջոցով»: Նշված հոդվածի վերլուծությունից ակնհայտ է, որ տեսանկարահանում իրականացվում է Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ նման կանոնակարգում նախատեսված չէ:
2	հեռախոսագանգ	17	17/38	ընտրողի փաստաթուղթն ընթացվում է տեխնիկական սարքավորման կողմից, վառվում է դեղին Նշան, սակայն ընտրողի տվյալները ընտրողների ցուցակում առկա են	հավաստի է	ճշտվել է թիվ 17 տարծքային ընտրական հանձնաժողովի և թիվ 17/38 տեղամասում տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետի հետ	ընտրողը ներկայացել էր վավերականության ժամկետը լրացած անձնագրով այն դեպքում, երբ Նոր անձնագիր ուներ: Ընտրողին պարզաբանվել է, որ նա պետք է ներկայացնի իր Նոր վավեր անձնագիրը:

3	http://armlur.am/747840/	20	20/28	Մեր թղթակցի փոխանցմամբ՝ քաղաքացիներից մեկի մատնահետքը սարքը չի ճանաչել: Բանն այն է, որ ընտրողը Ուկրաինայի քաղաքացի է՝ հաշվածված, ըստ երևույթին, ճամբարակում: Նա ընտրության մասնակցելու ծանուցում ստացել է, ընտրացուցակում ևս կա նրա անունը, իսկ ամուսինը՝ ճամբարանի քառաթափ է: Իսկ	հավաստի է	20/28 տեղամասային ընտրական հանձնաժողովից և ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունից	ընտրողը, հանդիսանալով օտարերկրյա քաղաքացի, ներկայացել էր վավերականության ժամկետը լրացած ճամփորդական վկայականով: Վերոգրյալի մասին նրան իրազեկելուց հետո ընտրողը ներկայացրել է անձը հաստատող այլ վավեր փաստաթուղթ, մասնագետը տվյալները ներմուծել է տեխնիկական սարքավորման մեջ, և ընտրողը մասնակցել է քվեարկությանը
4	http://haynews.am/hy/1509865267	36	36/15	Ահագանգ կա Վայոց ձորի մարզի Գողթանիկ համայնքից: Ահարոն Մինասյանը ով իր դստերը տարել Գողթանիկ ընտրության՝ ահաբեկում, վախեցնում է մարդկանց, անգամ սպառնացել է ծեծել Սոլակ անունով մի գողթանիկցու:	Չի համապատասխանում իրականությանը	Թիվ 36 տարածքային հանձնաժողովի նախագահ Ա. Հարությունյան և Գողթանիկ համայնքի թիվ 36/15 տեղամասային ընտրական հանձնաժողով	Վայոց ձորի մարզի Գողթանիկ համայնքի թիվ 36/15 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Պետիկ Սմբատյանի և հանձնաժողովի մյուս անդամներ հավաստմամբ՝ թիվ 36/15 ընտրական տեղամասում որևէ միջադեպ չի գրանցվել: Թիվ 36 տարածքային հանձնաժողովի նախագահ Ա. Հարությունյան նույնպես հաստատեց, որ միջադեպ չի եղել և ինքը անձամբ է ներկայացել նշված տեղամաս և ճշտել
5	http://armlur.am/747857/	20	20/26	ընտրողներից մեկը հայտնաբերեց, որ իր անվան դիմաց արդեն ստորագրված է:	իրականությանը համապատասխանում է	թիվ 20/26 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Չարինե Եղիազարյան, թիվ 20 տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Կ. Լևոնյան	103-րդ տողում գտնվող Վերոյան Վահե Ժորայի անունով ընտրողը շփոթմունքի արդյունքում ստորագրել է 105-րդ տողում գրանցված Ավայան Հերմինե Սերգոյի ընտրողի անվան դիմաց, որը հայտնաբերվել է ընտրող Հերմինե Սերգոյի Ավայանի ներկայանալու պահին: Պարզելով վերոգրյալը, փաստն արձանագրվել է գրանցամատյանում, և Հերմինե Ավայանին հնարավորություն է ընձեռնվել մասնակցել քվեարկությանը՝ սահմանված կարգով ստորագրելով է իր անվան դիմաց՝ լրացուցիչ նշումների համար նախատեսված սյունակում:
6	հեռախոսագանգ	38	38/7	Նախագահը թույլ չի տալիս վստահված անձին գրանցամատյանում կատարել գրառում նկատած խախտման վերաբերյալ	Չի համապատասխանում իրականությանը	Նախագահ Հասմիկ Մելիքյան	գրառումը կատարված է վստահված անձի կողմից 10 րոպե ուշացումով
7	http://armlur.am/747872/	20	20/27	Ճամբարակի 20/27 ընտրատեղամասից ArmLur.am-ի թղթակիցը հայտնում է, որ քաղաքացիներին մի քանի անգամ նույն երիտասարդն է փորձել ուղեկցել: Հերթական անգամ ուղեկցելու փորձ անելու ժամանակ նրան արգելել են և	Չի համապատասխանում իրականությանը	Նախագահ Հրաչիկ հանձնաժողովի անդամ <ԵԼԵ> դաշինքից Վրթուր Գասպարյան	

8	http://armlur.am/747875/	20	20/26	ընտրատեղամասում մեկ քվեախցիկ է տեղադրված, և հաճախ այն չի բավականացնում, արդյունքում կուտակումներ են լինում	համապատասխանում է իրականությանը	թիվ 20 տարածքային ընտրական հանձնաժողով	ՀՀ ընտրական օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Զվեարկության համար հատկացվում են խցիկներ՝ յուրաքանչյուր 750 ընտրողի հաշվարկով առնվազն մեկ խցիկ: Թիվ 20/26 ընտրական տեղամասում ընտրողների թիվը 415-ն է, իսկ ժամը 11:00-ի դրությամբ մասնակցել են 56 ընտրող:
9	http://armlur.am/747889/	20	20/28	Ճամբարակի 20/28 ընտրատեղամասից ArmLur.am-ի թղթակիցը հայտնում է, որ քիչ առաջ այստեղ միջադեպ է տեղի ունեցել: Քաղաքացին հայտարարել է, որ տեղամասից դուրս կանգնած քաղաացիներն իրեն հրել են՝ թույլ չտալով ներս մտնել: Ապա նույն քաղաքացին վիճաբանել է ոստիկանի հետ, ով փորձել է կարգավորել	Մասամբ է համապատասխանում իրականությանը	Թիվ 20/28 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Հակոբ Թիթիզյան	Հանձնաժողովի նախագահից պարզվեց, որ բարձրաձայն խոսելով տեղամաս է մտել մի կին՝ փորձելով խոչընդոտել ընտրական գործընթացը: Նախագահը փորձել է հանգստացնել, այնուհետև կանչել է ոստիկանության ծառայողներին, որից հետո նշված կինը կատարել է իր ընտրությունը և դուրս է եկել քվեարկության սենյակից:
10	http://armlur.am/747843/	20	20/29	ArmLur.am-ի թղթակիցը հայտնում է, որ 22 հոգի արդեն ուղեկցել է տարեցներին:	իրականությանը համապատասխանում է	թիվ 20/29 տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղար Թերեզա Օսիպյան	Պարզաբանեց, որ թիվ 22 օգնող օգնել են օգնության կարիք ունեցող տարեց ընտրողներին, հիմնականում օգնող են հանդիսացել այդ տարեցներին ուղեկցող անձինք (հիմնականում թոռնիկները): ՀՀ ընտրական օրենսգրքի խախտում առկա չէ
11	http://www.1in.am/2239754.html	20	20/29	Ճամբարակի 20/29 տեղամասում կուտակումներ են, քվեարկության են եկել նաև զինվորները	իրականությանը չի համապատասխանում	թիվ 20/29 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Իրինա Աթաբեկյան	ՀՀ ընտրական օրենսգրքի կանոնակարգումներին համապատասխան այն զինծառայողները, ովքեր հաշվառված են համայնքներում (նրանց թվից բացառություն են կազմում պարտադիր ժամկետային զինծառայողները, ինչպես նաև զորամասերի տեղակայման տարածքում հաշվառված պայմանագրային
12	http://galatv.am/hy/news/207922/	33	33/17 և 33/18	առնադրյուր գյուղում ընտրողները բավականին ակտիվ են, տեղամասում կուտակումներ են:	իրականությանը համապատասխանում է	թիվ 33 տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Գ. Պետրոսյան	Նշեց, որ քվեաթերթիկը ծրարում տեղադրելը տեղի է ունենում դանդաղ, ինչի արդյունքում գրանցվում են կուտակումներ: Հաշվի առնելով, որ Սառնաղբյուրի երկու տեղամասերում էլ քվեարկության սենյակի պայմանները թույլ են տալիս, այդ տեղամասեր ուղարկվել են մեկական լրացուցիչ քվեախցիկներ

13	http://tsavg.am/qaxaqakanutyun/21820-isns-su-elsl.html	33	33/11	<p>Ձորակապի 33/11 ընտրական տեղամասում վիճաբանություն սկսվեց այն ժամանակ, երբ հանձնաժողովի նախագահը փորձեց քվեարկության եկած անձանց բացատրել կարգը՝ թույլ չտալով առանց անձնագիր ներկայացնելու օգնել տատիկին:</p>	<p>իրականությանը համապատասխանում է մասամբ</p>	<p>թիվ 33 տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Գ. Պետրոսյան</p>	<p>թիվ 33 արածքային ընտրական հանձնաժողովի նախագահը պարզաբանումներ է ստացել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահից առ այն, որ անձը ներկայացել էր տարեց ընտրողի հետ, ցանկանում էր օգնել, սակայն անձը հաստատող փաստաթուղթ չուներ: Ներկայացած քաղաքացին գտնվել է ոչ սթափ վիճակում, նրան հրավիրել են դուրս: Մեկ այլ ընտրող գրանցվել է որպես օգնող և օգնել է տարեց ընտրողին մասնակցել քվեարկությանը:</p>
14	http://tsavg.am/qaxaqakanutyun/21820-isns-su-elsl.html	33	33/11	<p>Ձորակապիցներից մեկն էլ քվեարկության էր եկել ՌԴ անձնագրով՝ պնդելով, որ հայկական անձնագիր չունի, անունը ցուցակում կա, ընտրություններին անպայման մասնակցելու է:</p>	<p>իրականությանը համապատասխանում է մասամբ</p>	<p>թիվ 33 տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Գ. Պետրոսյան</p>	<p>ՌԴ անձնագիր ներկայացրած քաղաքացին ուներ նաև ՀՀ քաղաքացու անձնագիր, ինչը պարզվել է, երբ այդ քաղաքացու անձնագիրը ներմուծվել է տեխնիկական սարքավորման մեջ: Քաղաքացուն բացատրվել է, որ նա պետք է ներկայացնի իր անձնագիրը, նշված քաղաքացին հեռացել է, բերել է ոստիկանությունից տրված՝ անձը հաստատող փաստաթղթին փոխարինող տեղեկանք, որի հիման վրա էր մասնակցել է քվեարկությանը</p>